

Հատուկ կարծիք

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատի կողմից
թիվ ՎԴ/5866/05/22 վարչական գործով 07.03.2025 թվականին կայացված
որոշման վերաբերյալ

07.03.2025 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝
վճռաբեկ դատարան), 07.03.2025 թվականին գրավոր ընթացակարգով քննելով Գոռ
Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.05.2024
թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Գոռ Մնացականյանի ընդդեմ ՀՀ
ոստիկանության պարեկային ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ 06.07.2022 թվականի
վարչական իրավախախտման գործով թիվ 8180146754 որոշումը և 03.08.2022 թվականի
բողոքարկման վարույթի արդյունքներով ընդունված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի
մասին, վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է
վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.05.2024
թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 15.03.2023 թվականի
վճռին՝ նույն որոշման պատճառաբանություններով:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Բ. Մկրյանս և
Լ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և
եզրափակիչ մասերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության
կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի
6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Այս հատուկ կարծիքը շարադրելիս հիմք են ընդունվել որոշման մեջ ներկայացված՝
վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումներն ու վճռաբեկ բողոքի քննության համար
նշանակություն ունեցող փաստերը:

2. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Սույն գործով Դատարանը 15.03.2023 թվականի վճռով Գոռ Մնացականյանի հայցը
բավարարել է՝ պատճառաբանելով, որ չի հիմնավորվում այն փաստը, որ հայցվորը,
գտնվելով ոչ սթափ վիճակում, վարել է տրանսպորտային միջոցը և հիմք ընդունելով այն
հանգամանքը, որ իրավախախտման դեպքի առկայությունն ապացուցելու բեռը կրում է
վարչական մարմինը, հետևաբար վերջինս էլ պետք է ապացուցեր իր կողմից ընդունված
որոշման իրավաչափությունը, իրավախախտման դեպքի չապացուցված լինելու բացասական
հետևանքները կրում է պատասխանողը:

Վերաքննիչ դատարանը 14.05.2024 թվականի որոշմամբ ամբողջությամբ բավարարել
է Ծառայության վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռն ամբողջությամբ բեկանել և փոփոխել

է՛ հայցը մերժել է: Վերաքննիչ դատարանը մասնավորապես արձանագրել է հետևյալը. «ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության 06.07.2022 թվականի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Գոռ Գագիկի Մնացականյանը ք.Երևան, Կողբացի փ. 01:10-ին տ/մ վարել է ոչ սթափ վիճակում (մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերացանցում է 0.5 մ/գ): Այնուհետև, Վերաքննիչ դատարանը նկատում է, որ տեխնիկական միջոցը, որով իրականացվել է հայցվորի սթափության վիճակի զննությունը, «Jupiter X/RP» տեսակի թիվ 91100852 գործարանային համարի «Ալկոտեստեր» սարքն է, որը ստուգաչափվել է 07.01.2022 թվականին, ուժի մեջ է եղել մինչև 07.01.2023 թվականը, ստուգաչափման արդյունքների հիման վրա չափման միջոցը բավարարել է սահմանված պահանջներին, չափման տիրույթն է 0.000-1.200 մգ/լ: Ըստ նշված սարքի՝ 06.07.2022 թվականին, ժամը 01:16:45-րդ վայրկյանին զննված Գոռ Մնացականյանի 1լ արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը կազմել է 0.732 մգ/լ: Այսպիսով, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ամբողջ նշվածով հաստատվում է այն փաստը, որ հայցվորը թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտումը:

Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ հայցվորի կողմից տրանսպորտային միջոցը վարելու վերաբերյալ ապացույցներ առկա չեն, ապա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ նշվածը հիմնավորելու համար հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացահայտված չէ, թե հայցվորի կողմից տրանսպորտային միջոցը չվարելու պայմաններում ինչ կերպ պատասխանողը կարող էր նույնականացնել հայցվորին, արձանագրությունում նշել անձնական տվյալներ և կազմել համապատասխան արձանագրություն, այնուհետև՝ որոշում: Հարց է ծագում, եթե հայցվորը չէր վարում տրանսպորտային միջոցը, ինչու պետք է ներկայանար և ներկայացներ համապատասխան փաստաթղթեր, որոնց միջոցով պարեկը նույնացրել է անձին, և անցներ համապատասխան զննություն»:

Վճռաբեկ դատարանը որոշել է Գոռ Մնացականյանի վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.05.2024 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 15.03.2023 թվականի վճռին՝ պատճառաբանելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կարգավորումներով օրենսդիրը երաշխավորել է, որ.

- անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

- անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթում անձի հակաիրավական, մեղավոր վարքագիծ ցուցաբերած լինելու ապացուցման բեռը դրված է վարչական մարմնի վրա,

- վիճարկման հայցով ապացուցման բեռը դրված է վարչական մարմնի վրա, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով, և եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ

մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոգրյալ իրավակարգավորումների ուժով տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելու վարչական իրավախախտման փաստի ապացուցման պարտականությունը (բեռը) ինչպես վարչական վարույթի, այնպես էլ ՀՀ վարչական դատարանում վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում կրում է վարչական մարմինը, հետևաբար վերջինս պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ այդ փաստը հաստատող անհերքելի ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտման հիմքով անձին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով զրկելու վերաբերյալ վարչական ակտ կայացնելու համար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անհրաժեշտ է ապացուցել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

- վարչական պատասխանատվության ենթարկվող անձը վարել է տրանսպորտային միջոցը,

- վարչական պատասխանատվության ենթարկվող անձը տրանսպորտային միջոցը վարելիս եղել է ոչ սթափ վիճակում (արյան մեկ լիտրի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 1 գրամը կամ մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0.5 միլիգրամը):

Թվարկված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը պարտադիր է իրավախախտման փաստը հաստատված համարելու համար, ուստի նշված երկու հանգամանքները հիմնավորող բավարար ապացույցների առկայության դեպքում է միայն հնարավոր անձի նկատմամբ կիրառել պատժիչ սանկցիա՝ նրան զրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցվորին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սանկցիայի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու համար Ծառայությունը պարտավոր էր անհերքելի ապացույցներով հիմնավորել, որ վերջինս **վարել է** տրանսպորտային միջոցը՝ գտնվելով **ոչ սթափ վիճակում**: Նման ապացույց կարող էր հանդիսանալ հսկողական տեսախցիկով արված տեսանյութը, որի պարունակությունը թույլ կտար ստանալ այն հարցի պատասխանը, թե արդյոք հայցվորն է վարել մեքենան: Ընդ որում՝ մեքենան հայցվորի կողմից վարելու փաստը չհաստատվելու պարագայում հայցվորի ոչ սթափ վիճակում գտնվելու հանգամանքն ինքնին դառնում է ոչ էական, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքը վարչական իրավախախտում որակելու համար պարտադիր է վերը նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի ուժով Ծառայությունն էր պարտավոր ապացուցել, որ Գոռ Մնացականյանը վարել է տրանսպորտային միջոցը՝ գտնվելով ոչ սթափ

վիճակում, որպիսի պարտականությունը, սակայն, վերջինս չի կատարել: Մասնավորապես՝ թեև առկա են վարորդի սթափության վիճակի գննության վերաբերյալ արձանագրություն, համաձայն որի՝ Գոռ Մնացականյանը գտնվել է ոչ սթափ վիճակում և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, համաձայն որի՝ Գոռ Մնացականյանը տրանսպորտային միջոցը վարել է՝ գտնվելով ոչ սթափ վիճակում, այդուհանդերձ նշվածը բավարար չէր կարող լինել վերջինիս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտում վերագրելու համար, քանի որ տրանսպորտային միջոցը Գոռ Մնացականյանի կողմից վարելու փաստը հաստատող բավարար համակցությամբ ապացույցներ գործում առկա չեն: Ավելին, ինչպես վերը նշվեց, վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտում կատարած անձի կողմից առանց որևէ առարկության վկայակոչման ստորագրված լինելը դեռևս բավարար հիմք չէ վարչական իրավախախտման փաստը հաստատված համարելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ Դատարանը իրականացրել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն և ապացույցների համադրված գնահատման արդյունքում հաստատված չի համարել հայցվորին վերագրված իրավախախտման փաստը, այն է՝ տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը և Ծառայության 06.07.2022 թվականի վարչական իրավախախտման գործով թիվ 8180146754 որոշումն իրավացիորեն գնահատել է ոչ իրավաչափ՝ անվավեր ճանաչելով այն, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի վերաբերյալ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշմամբ և այլ՝ թիվ ՎԴ/6871/05/22 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ՀՀ վարչական դատարանի կողմից արտահայտված միմյանց հակասող մեկնաբանություններին, որը, որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորում, վկայակոչել է նաև բողոքաբեր Գոռ Մնացականյանը:

Այսպես, թիվ ՎԴ/6871/05/22 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի կարգավորումներին՝ ՀՀ վարչական դատարանը, ըստ էության, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ՀՀ ոստիկանության պարեկային ծառայությունը, կրելով հայցվորի ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու փաստի ապացուցման բեռը, չի ապացուցել այն, չի ներկայացրել այդ փաստը հաստատված համարելու համար բավարար ապացույցներ: Մասնավորապես՝ պատասխանողը հայցվորի ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու փաստի ապացուցման համար չի ներկայացրել «ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի թիվ 36-Լ հրամանի 2.1-ին

կետի 11-րդ ենթակետով սահմանված համազգեստի վրա կրվող շարժական տեսախցիկով ամրագրված իրավախախտման վերաբերյալ տեսաձայնագրություն: Արդյունքում ՀՀ վարչական դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դրա բացասական հետևանքները պետք է կրի ՀՀ ոստիկանության պարեկային ծառայությունը:

Մինչդեռ, սույն գործով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հայցվորի կողմից տրանսպորտային միջոցը վարած չլինելը հիմնավորելու համար հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացահայտված չէ, թե հայցվորի կողմից տրանսպորտային միջոցը չվարելու պայմաններում ինչ կերպ պատասխանողը կարող էր նույնականացնել հայցվորին, արձանագրությունում նշել անձնական տվյալներ և կազմել համապատասխան արձանագրություն, այնուհետև՝ որոշում: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրահանգման, որ հայցվորը թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտումը:

Վճռաբեկ դատարանը, արժևորելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական առաքելությունը, անհրաժեշտ է համարել նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը ենթակա են կիրառման վերը վկայակոչված թիվ ՎԴ/6871/05/22 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտում արտահայտված ու սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից վերահաստատված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, ինչն էական նշանակություն կունենա անձին տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելու համար տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու վերաբերյալ կայացված վարչական ակտի վիճարկման հայցի քննության գործերով ապացուցման ենթակա հանգամանքների և ապացուցման բեռի բաշխման կանոնների վերաբերյալ միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

3. Վճռաբեկ դատարանի դատավորներ Քրիստինե Մկոյանս և Լիանա Հակոբյանս, համաձայն չլինելով վճռաբեկ բողոքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից վերը նշված որոշմամբ արտահայտած դիրքորոշման հետ, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած դիրքորոշումն ամփոփ հանգում է նրան, որ սույն վարչական գործով վիճարկվող որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ, քանի որ հաստատված չի համարվել հայցվորին վերագրված իրավախախտման փաստը, այն է՝ տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը:

Անդրադառնալով սույն վարչական գործով վիճարկվող որոշումն օրենքի խախտմամբ ընդունված լինելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգմանը՝ գտնում ենք, որ այն հիմնավոր չէ՝ հետևյալ պատճառաբանություններով.

Այսպես, սույն գործի փաստերից հետևում է, որ Ծառայության 06.07.2022 թվականի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Գոռ Մնացականյանը ք. Երևան, Կողբացի փ. 01:10-ին տրանսպորտային միջոցը վարել է ոչ սթափ վիճակում, մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերացանցում է 0.5 մ/գ: Սթափությունը ստուգվել է Alcovisor սարքի միջոցով՝ սարքի համար 91100852, գննման համար՝ 01186 **(գ. թ. 54)**:

Ծառայության 06.07.2022 թվականի թիվ 8180146754 որոշմամբ Գոռ Մնացականյանը, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելու համար զրկվել է տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից՝ 1 տարի ժամկետով **(գ. թ. 54)**:

Տեխնիկական միջոցով կազմված (տպագրված) վարորդի սթափության վիճակի գննության արձանագրության համաձայն՝ թիվ 91100852 սարքով, թիվ 01186 գննման համարով 06.07.2022 թվականին, ժամը 01:16:45-ին կատարվել է սթափության ստուգում, որով Գոռ Մնացականյանի արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը կազմել է 0.732 մգ/լ **(գ. թ. 56)**:

Ծառայության պետի պարտականությունների ժամանակավոր կատարողի 03.08.2022 թվականի «ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 06.07.2022թ.-ին կայացված 8180146754 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 06.07.2022 թվականի թիվ 8180146754 որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ առանց բավարարման **(գ. թ. 63-64)**:

Սույն գործով վիճարկվող վարչական ակտի անվավերության հիմքում դրվել է այն հանգամանքը, որ տրանսպորտային միջոցը հայցվոր Գոռ Մնացականյանի կողմից վարելու փաստը հաստատող բավարար համակցությամբ ապացույցներ գործում առկա չեն, և Ծառայությունն էր պարտավոր ապացուցել, որ Գոռ Մնացականյանը վարել է տրանսպորտային միջոցը՝ գտնվելով ոչ սթափ վիճակում:

Տրանսպորտային միջոցը հայցվոր Գոռ Մնացականյանի կողմից վարելու փաստի ապացուցման վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետևյալը.

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլինեք առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա

հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

«Վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

«Վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

«Վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

«Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*լեե'ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ* «Վարչական դատավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի»

պետրական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը պետք է կատարվի տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերով սահմանված պահանջների պահպանման հարցը պարզելու միջոցով (տե՛ս Հասմիկ Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/8975/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող յուրաքանչյուր վարչական գործով ապացուցման առարկան կազմող բոլոր փաստերի առկայությունը կամ բացակայությունը պետք է հաստատվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ: Ընդ որում՝ **յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի բոլոր ապացույցների համակցության մեջ՝ համադրելով դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների և վարչական գործում առկա փաստական տվյալների հետ** (տե՛ս Արթուր Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/13464/05/21 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.12.2024 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված):

Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ

ապացուցման բեռը: Գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, վճռորոշ նշանակություն են ստանում այն դեպքում, երբ կողմերի ներկայացրած, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքի իրագործման պայմաններում ձեռք բերված ապացույցները բավարար չեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության մասին օբյեկտիվ և հիմնավորված եզրահանգում կատարելու համար: Ըստ այդմ, ապացուցման բեռի բաշխման կանոնները հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնելու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

«Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված) (տե՛ս, Սիրանուշ Վարդանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձինք Նելլի Վարդանյան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ թիվ ՎԴ/0634/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն, անդրադառնալով ապացույց ներկայացնելու պարտականության և ապացուցման բեռի հարաբերակցությանը, արձանագրել է հետևյալը. «Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է ապացույցներ ներկայացնելու ընդհանուր կանոն, համաձայն որի՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման համաձայն՝ վարչական մարմինը բոլոր դեպքերում, անկախ ապացուցման բեռը կրելու կամ չկրելու հանգամանքից, ունի իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած ապացույց ներկայացնելու պարտականություն, ինչը, սակայն, չի նշանակում, որ այդպիսիք ներկայացնելու անհնարիության դեպքում վարչական մարմինը

պետք է կրի չապացուցված փաստով պայմանավորված բացասական իրավական հետևանքներ:

«Վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումից ակնհայտ է, որ գործի ելքը պայմանավորող փաստի չապացուցված մնալու պարագայում դրա բացասական հետևանքները կրում է ոչ թե ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող, այլ ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող և այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը, հետևաբար նշված փաստը չապացուցելու բացասական հետևանքները պետք է դրվեն այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը ողջամտորեն կարող է կրել միայն այն կողմը, ում պնդմամբ վիճելի փաստը տեղի է ունեցել, իսկ «Վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը կիրառելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել, թե դատավարության մասնակիցներից որ կողմն է կրում գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը:

(...)

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու վարչական մարմնի պարտականությունը, իսկ 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված է վարչական մարմնի ապացուցման պարտականությունը, որը վերջինս կրում է անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: *Միաժամանակ օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի գործողության ոլորտը սահմանելիս նույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով, այդ թվում նաև՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների վրա:*

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի գործողությունը չի տարածվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների վրա, հետևաբար դրանցով սահմանված պարտականությունները վարչական մարմնի կողմից պահպանված չլինելու փաստը հաստատված համարելու պարագայում անգամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը չի կարող վրա հասնել:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը կիրառելի է միայն այն դեպքում, երբ գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը կրող կողմը չի կարողանում ապացուցել իր պահանջների կամ առարկությունների հիմքում դրված որևէ փաստ: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով

սահմանված իրավական հետևանքը դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ուղղակի արդյունք է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու, ինչպես նաև անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման պարտականությունը կրելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված իրավակարգավորումները վարչական դատավարությունում կիրառելի չեն, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածներում սահմանված պարտականությունը վարչական մարմնի կողմից չկատարելը չի կարող առաջացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը» (տե՛ս, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Մանուկ Նազարյանի թիվ ՎԴ/9439/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով և զարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ ընդգծել է նաև, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոնների կիրառմամբ պայմանավորված ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է վիճարկվող վարչական ակտն ընդունած վարչական մարմինը՝ ակտն ընդունելու համար հիմք ծառայած փաստերի մասով: Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինը, սակայն, չի կարող կրել դատավարության մյուս մասնակցի պնդմամբ տեղի ունեցած փաստի ապացուցման բեռը, իսկ այդ դեպքում կիրառելի է ապացույցներ ներկայացնելու ընդհանուր կանոնը, համաձայն որի՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Այսինքն՝ **վիճարկման հայցով հայցվորի կողմից ներկայացված առարկությունների հիմքում ընկած որևէ փաստի ապացուցման բեռը ողջամտորեն կարող է դրվել միայն նրա, որպես այդ փաստի առկայության վերաբերյալ տեղեկություններին, տվյալներին տիրապետող անձի վրա:** Հակառակ մեկնաբանման դեպքում կստացվի մի իրավիճակ, որ ակտն ընդունելու համար հիմք ծառայած փաստերի մասով ապացուցման բեռով պայմանավորված վարչական մարմինը բարեխղճորեն կատարելով ապացույցներ ներկայացնելու իր պարտականությունը, ստիպված կլինի ապացուցելու նաև հայցվորի պնդմամբ տեղի ունեցած այնպիսի փաստ, որին վարչական մարմինն օբյեկտիվորեն չի կարող տեղյակ լինել (տե՛ս, Սամվել Պողոսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1603/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, եթե վարորդը միայն ակոհոլի ազդեցության տակ է, և զանցանքը չի պարունակում նույն հոդվածի երկրորդից հինգերորդ մասերի հատկանիշները՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը կատարելը, եթե վարորդի արյան մեկ լիտրի մեջ մաքուր ակոհոլի պարունակությունը գերազանցում է 1 գրամը կամ եթե նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ակոհոլի պարունակությունը գերազանցում է 0.5 միլիգրամը՝ առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝ 1) տվյալ գործի քննությունը վերաբերում է արդյոք իր իրավասությանը, 2) ճիշտ են կազմվել արդյոք վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը, 3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են արդյոք դրա քննության ժամանակի և տեղի մասին, 4) պահանջվել են արդյոք անհրաժեշտ լրացուցիչ նյութեր, 5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական

իրավախախտում, արդյոք տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության, կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ, պատճառվել է արդյոք գույքային վնաս, հիմքեր կան արդյոք վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության, աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու համար, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

«Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքում հստակ սահմանել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում ապացույցներ են համարվում այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատում են գործի հանգամանքները, վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Սակայն ցանկացած փաստական տվյալ չէ, որ կարող է համարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի ապացույց: Փաստական տվյալները կարող են համարվել ապացույց, եթե առաջին՝ բովանդակում են տվյալներ վարչական իրավախախտման կամ դրա բացակայության մասին, տվյալ անձի մեղավորության կամ անմեղության մասին, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների մասին, և երկրորդ՝ այդ փաստական տվյալների բացահայտման, հավաքագրման և ձևակերպման գործընթացները պետք է համապատասխանեն օրենսդրության պահանջներին: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմինն պարզելու գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

«Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով՝ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները: Վերը նշվածն իրականացնելու համար

համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս պետք է պատշաճ ձևով լուծի նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք օրենքին համապատասխան են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը (*տե՛ս, Սուրեն Սիմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ **պրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ոստիկանության ծառայողի պահանջով ոչ սթափ վիճակում գտնվելու բավարար հիմքերի առկայության դեպքում ենթարկվել համապատասխան ստուգման՝ սթափության վիճակը որոշելու համար (...)**:

Նույն հոդվածի 7-րդ մասի «ա» կետի համաձայն՝ վարորդին արգելվում է տրանսպորտային միջոցը վարել ոչ սթափ վիճակում:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «իե.3» կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է վարորդի սթափության վիճակի գննության կարգը, այդ գննության արձանագրության, ուղեգրի, գրանցման մատյանի ձևերը:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետի համաձայն՝ ի թիվս այլնի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում ՀՀ ոստիկանությունը՝ տեխնիկական միջոցով սահմանված կարգով իրականացնում է արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի գննություն (ոչ սթափ վիճակում լինելու փաստի ստուգում):

Վարորդի սթափության վիճակի գննությունը կատարվում է «Վարորդի սթափության վիճակի գննության կարգը, այդ գննության արձանագրության, ուղեգրի, գրանցման մատյանի ձևերը հաստատելու» ՀՀ կառավարության 19.03.2009 թվականի թիվ 277-Ն որոշմամբ հաստատված թիվ 4 Հավելվածի «Ոստիկանության ծառայողի կողմից տեխնիկական միջոցով արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի գննություն (ոչ սթափ վիճակում լինելու փաստի ստուգում) իրականացնելու» Կարգին (այսուհետ նաև՝ Կարգ) համապատասխան:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ *վարորդի սթափության վիճակի գննություն իրականացնելու համար ոստիկանության ծառայողը տեխնիկական միջոց է մուտքագրում **զննության ենթակա վարորդի անունը, ազգանունը***, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, տեղադրում նոր գննության խողովակ (մունդշտուկ) և առաջարկում վարորդին արտաշնչելու միջոցով անցնել սթափության վիճակի գննություն՝ նրան բացատրելով գննություն անցնելու (արտաշնչելու) ձևը:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ եթե վարորդի սթափության վիճակի գննության արդյունքում պետք է կազմվի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, ապա տեխնիկական միջոցով կազմվում է (տպագրվում է) նաև վարորդի սթափության վիճակի գննության արձանագրություն՝ երկու օրինակից, որում պարտադիր նշվում են հետևյալ տվյալները՝

- 1) տեխնիկական միջոցի համարը.
- 2) տեխնիկական միջոցի վերջին ստուգաչափման օրը, ամիսը, տարեթիվը.
- 3) սթափության վիճակի գննության օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
- 4) ալկոհոլի պարունակությունը.

5) վարորդի անունը, ազգանունը.

- 6) տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը.
- 7) սթափության վիճակի գննություն իրականացնող տեսուչի ազգանունը, կրծքանշանի համարը:

Վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ ոչ սթափ վիճակում գտնվելու բավարար հիմքերի առկայության դեպքում սթափության վիճակի գննություն անցնելը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի 2-րդ ենթակետի իմաստով տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունն է: Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ վարորդը տրանսպորտային միջոցը ղեկավարող անձն է, այսինքն՝ այդ պարտականությունը վերաբերում է խախտումն արձանագրելու պահին տրանսպորտային միջոցը վարող անձին: Ոստիկանության ծառայողի կողմից վարորդի սթափության վիճակի գննությունն իրականացնում է տեխնիկական միջոցով արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով ՀՀ կառավարության 19.03.2009 թվականի թիվ 277-Ն որոշմամբ հաստատված Կարգին համապատասխան: Նույն կարգի դրույթների բովանդակությունից ակնհայտ է, որ **սթափության վիճակի գննություն տրանսպորտային միջոցի վարորդից զատ որևէ այլ անձի նկատմամբ իրականացվել չի կարող**, քանի որ տեխնիկական միջոց է մուտքագրվում գննության ենթակա վարորդի անունը, ազգանունը, վարորդի սթափության վիճակի գննության արձանագրությունում նշվում է վարորդի անունը, ազգանունը, որպիսի տվյալները ոստիկանության ծառայողի կողմից մուտքագրվում են վարորդի՝ անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերի ուսումնասիրությամբ: Վարորդի սթափության վիճակի գննության արձանագրությունում ներառված վերջինիս անձնական տվյալները որևէ այլ եղանակով ձեռք բերված լինելու վերաբերյալ ապացույցների բացակայության դեպքում ողջամտորեն ենթադրվում է, որ դրանք տրամադրվել են սթափության վիճակի գննության ենթակա անձի կողմից, ուստի անձի կողմից սեփական համաձայնությամբ սթափության վիճակի գննություն անցած լինելն արդեն իսկ բավարար հիմք է արձանագրելու, որ վերջինս հանդիսացել է տրանսպորտային միջոցի վարորդը:

Սույն վարչական գործը հարուցվել է Գոռ Մնացականյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 06.07.2022 թվականի վարչական իրավախախտման գործով թիվ 8180146754 որոշումը և 03.08.2022 թվականի բողոքարկման վարույթի արդյունքներով ընդունված որոշումն այն հիմքով, որ գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում մեքենան իր կողմից ոչ սթափ վիճակում վարելու հանգամանքը:

Վարչական իրավախախտման ապացույց համարվող 06.07.2022 թվականին՝ ժամը 01:25-ին, կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը վկայում է այն մասին, որ ծառայության պարեկն արձանագրել է հայցվորի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու փաստը, իսկ տեխնիկական միջոցով կազմված

(տպագրված) վարորդի սթափության վիճակի զննության արձանագրության համաձայն՝ թիվ 91100852 համարի սարքով, թիվ 01186 զննման համարով 06.07.2022 թվականին՝ ժամը 01:16:45-ին, կատարվել է սթափության ստուգում, որով Գոռ Մնացականյանի արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը կազմել է 0.732 մգ/լ:

Որպես հայցվորի կողմից անթույլատրելի չափով ալկոհոլ օգտագործելու ապացույց՝ գործի նյութերում առկա են թիվ 91100852 ալկոտեստերով իրականացված ստուգման արդյունքները, և որպես նշված սարքի պատշաճ գործելու վերաբերյալ ապացույց՝ ստուգաչափման մասին թիվ 062517 վկայականը (գ.թ. 55), ըստ որի չափման տիրույթը՝ 0,000-1,200 մգ/լ է, ստուգաչափումը տեղի է ունեցել 07.01.2022 թվականին և ուժի մեջ է մինչև 07.01.2023 թվականը: Ալկոտեստերով հայցվորի սթափությունը պարզվել է 06.07.2022 թվականին:

Նման պայմաններում առկա չէ ողջամիտ կասկած նշված ալկոտեստերով սթափության ստուգման արդյունքների վերաբերյալ, իսկ հայցվորը չի ներկայացրել դրանք հերքող տվյալներ:

Գտնում ենք, որ հայցվորի կողմից սթափության վիճակի զննություն անցնելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սթափության վիճակի զննություն անցնելը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի 2-րդ ենթակետի իմաստով տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունն է, արդեն իսկ բավարար հիմք է արձանագրելու, որ վերջինս հանդիսացել է տրանսպորտային միջոցի վարորդը: Այսինքն, եթե հայցվորի պնդմամբ ինքը չի վարել տրանսպորտային միջոցը, ապա հասկանալի չէ, թե ինչու է համաձայնել ենթարկվելու սթափության վիճակի զննության, ինչ կերպ է Ծառայությունը նույնականացրել հայցվորին, արձանագրությունում նշել անձնական տվյալներ, այնուհետև կայացրել որոշում: Սույն գործով կայացված դատական ակտով նման իրավաչափ եզրահանգման է եկել նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը:

Գտնում ենք, որ վարչական վարույթի նյութերում առկա ապացույցներով հաստատվում է հայցվորի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու հանգամանքը:

Պետք է ընդգծել, որ Վճռաբեկ դատարանն իր 07.03.2025 թվականի որոշմամբ սույն գործով կիրառելի է համարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածների իրավակարգավորումները՝ դրանով իսկ հակասելով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ՎԴ/9439/05/13 և թիվ ՎԴ/1603/05/16 վարչական գործերով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներին այն մասով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի գործողությունը չի տարածվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների վրա, հետևաբար դրանցով սահմանված պարտականությունները վարչական մարմնի կողմից պահպանված չլինելու փաստը հաստատված համարելու պարագայում անգամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը չի կարող վրա հասնել:

Հաջորդիվ, անդրադառնալով թիվ ՎԴ/6871/05/22 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտում

արտահայտված ու սույն գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից վերահաստատված իրավական դիրքորոշմանն առ այն, որ «ՀՀ ոստիկանության պարեկային ծառայությունը, կրելով հայցվորի ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու փաստի ապացուցման բեռը, չի ապացուցել այն, չի ներկայացրել այդ փաստը հաստատված համարելու համար բավարար ապացույցներ: Մասնավորապես՝ պատասխանողը հայցվորի ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու փաստի ապացուցման համար չի ներկայացրել «ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի թիվ 36-Լ հրամանի 2.1-ին կետի 11-րդ ենթակետով սահմանված համազգեստի վրա կրվող շարժական տեսախցիկով ամրագրված իրավախախտման վերաբերյալ տեսաձայնագրություն»՝ հարկ ենք համարում նշել հետևյալը.

Նախ, պետք է փաստել, որ որպես նշված եզրահանգման հիմնավորում՝ Վճռաբեկ դատարանի կողմից վկայակոչվել է թիվ ՎԴ/6527/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2021 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ «(...) պարեկային ավտոմոբիլները իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, ալկոմետր, տեսախցիկ և այլն) կահավորելու պահանջն ինքնանպատակ չէ, և երբ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողը՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պարտականությունից զատ պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի վարչական իրավախախտման փաստը իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով արձանագրելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը ենթադրյալ իրավախախտում կատարած անձը ստորագրել է՝ առանց որևէ առարկության վկայակոչման, վարչական իրավախախտման փաստը հաստատված համարելու համար բավարար հիմք չէ»:

Իսկ ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/6871/05/22 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտում, որպես նշված եզրահանգման հիմնավորում, վկայակոչվել են «ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի թիվ 36-Լ հրամանի 2.1-րդ կետի 11-րդ ենթակետը, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը:

Գտնում ենք, որ թիվ ՎԴ/6527/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2021 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չեն՝ հետևյալ պատճառաբանություններով.

Այսպես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **նույնանման փաստերով** այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

Թիվ ՎԴ/6527/05/18 վարչական գործը հարուցվել է Արծրուն Խաչատրյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշումը: Նշված որոշմամբ Արծրուն Խաչատրյանը ենթարկվել էր վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով և նրա նկատմամբ նշանակվել էր տուգանք՝ 5.000 ՀՀ դրամ գումարի չափով այն բանի համար, որ վերջինս չէր կատարել «Մուտքն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը:

Փաստորեն, թիվ ՎԴ/6527/05/18 վարչական գործով հայցի առարկան **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի** (տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը) խախտման հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջն է, իսկ սույն գործով հայցի առարկան **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի** (նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը կատարելը, այն է՝ տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը եթե վարորդի արյան մեկ լիտրի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 1 գրամը կամ եթե նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0.5 միլիգրամը) խախտման հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջը:

Ըստ այդմ՝ թիվ ՎԴ/6527/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2021 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերելի են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ կայացված վարչական ակտերի վիճարկման հիման վրա հարուցված գործերին:

Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով և 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմերի օբյեկտիվ կողմերը միանգամայն տարբեր են, որպիսի պայմաններում ակնհայտ է, որ տարբեր հակաիրավական արարքների առկայությունը հիմնավորող ապացուցողական նյութը կարող է չնույնանալ՝ պայմանավորված բացահայտման ենթակա փաստական հանգամանքների շրջանակով: Օրինակ, մի զանցակազմի դեպքում՝ առանց ոստիկանության ծառայողի համազգեստի վրա կրվող շարժական տեսախցիկով ամրագրված իրավախախտման վերաբերյալ տեսաձայնագրության կարող է հնարավոր չլինել բացահայտել իրավախախտման փաստը, իսկ մեկ այլ զանցակազմի դեպքում՝ գործում առկա ապացույցների համակցությունն առանց հիշյալ տեսաձայնագրության կարող է բավարար լինել իրավախախտման փաստը հաստատված համարելու համար: Այսինքն, հիշյալ

տեսաձայնագրության բացակայությունը միանշանակ չի կարող մեկանաբանվել, որպես իրավախախտման բացակայություն, բոլոր վարչական իրավախախտումների դեպքում:

Քննարկվող պարագայում, եթե դիտարկենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով և 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հակաիրավական արարքների հաստատման համար անհրաժեշտ պայմանների առկայության գնահատման գործընթացում պարզման ենթակա հանգամանքների շրջանակը, ապա պետք է նկատել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման (տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը) առկայությունը հաստատված համարելու համար պարզման ենթակա կարող են լինել իրավախախտման կատարման վայրում օրենսդրության պահանջներին համապատասխան ճանապարհային նշանի տեղադրված լինելը, դրա տեսանելիությունը տրանսպորտային միջոցի վարորդին կամ ճանապարհային նշանի պահանջը չկատարելու փաստի եղելությունն առհասարակ, որպիսի հանգամանքների բացահայտման համար ոստիկանության ծառայողի համազգեստի վրա կրվող շարժական տեսախցիկով ամրագրված իրավախախտման վերաբերյալ տեսաձայնագրությունը կարող է լինել առանցքային կարևորություն ունեցող ապացույց: Մինչդեռ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք (տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը) կատարված լինելու փաստի հաստատման տեսանկյունից ոստիկանության ծառայողի համազգեստի վրա կրվող շարժական տեսախցիկով ամրագրված իրավախախտման վերաբերյալ տեսաձայնագրությունը չունի նույն նշանակությունը, եթե գործում առկա այլ ապացույցների համակցությամբ տրանսպորտային միջոցը իրավախախտում կատարած անձի կողմից վարելու փաստը հաստատվում է:

Պետք է նկատել նաև, որ ոստիկանության ծառայողի համազգեստի վրա կրվող շարժական տեսախցիկով ամրագրված իրավախախտման վերաբերյալ տեսաձայնագրությունը որևէ իրավական ակտով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի պարտադիր ապացույց չի դիտարկվում: Այլ է խնդիրը, որ ճանապարհային երթևեկության կանոնների որոշ խախտումներ կարող են ամրագրվել և արձանագրվել բացառապես տեխնիկական սարքերով՝ այդ թվում նաև տեսանկարահանման և լուսանկարահանման եղանակով:

Այսպես, ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1769-Ն որոշման 1-ին կետով սահմանվել է ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի: Նույն հավելվածով սահմանված «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման» կարգի 12-րդ կետի համաձայն՝ պարեկային ավտոմոբիլները (մոտոցիկլետները) պետք է կահավորված լինեն հատուկ լուսային և ձայնային ազդանշաններ արձակելու համար նախատեսված սարքավորումներով, բորտհամակարգչով, իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, ակոմետր, տեսախցիկ և այլն), կապի միջոցներով, լուսարձակով, մահակով, կրակմարիչով, մինչքժշկական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված պայուսակով,

ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով համապատասխան տեխնիկական միջոցներով ու ճանապարհային նշաններով: Ճանապարհային նշանների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

Ծառայություն իրականացնող պարեկային ավտոմոբիլում (մոտոցիկլետի վրա) տեղադրված տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը և երթևեկության ուղղությունը ցույց տվող սարքավորումը և (կամ) ճանապարհապարեկային ծառայության իրականացման հսկողական տեսախցիկը պետք է միացվեն ծառայության դուրս գալու պահից և չանջատվեն (հսկողական տեսախցիկը՝ բացառությամբ ընդմիջման ժամանակի) մինչև ծառայության ավարտից հետո շարային ստորաբաժանում վերադառնալը:

«ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի թիվ 36-Լ հրամանի 2.1-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ պարեկային ծառայողի տեխնիկական հագեցվածության ու սպառազինության մեջ ներառվում են (...) 11. համազգեստի վրա կրվող շարժական տեսախցիկ:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ (...) հանցագործությունները կանխելիս կամ բացահայտելիս, հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ ոստիկանության տվյալ լիազորությունների իրականացմամբ սահմանափակվող ժամկետում: (...) Տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցն ամրացվում է ոստիկանության ծառայողի համազգեստին կամ գտնվում է ոստիկանության ծառայողի ձեռքում կամ ոստիկանության ծառայողական տրանսպորտային միջոցում: (...) Ոստիկանության ծառայողները պետք է տեսաձայնագրող և լուսանկարահանող տեխնիկական միջոցները կրեն տեսանելի ձևով, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների իրականացման դեպքերի: (...) Տեսաձայնագրումը, տեսանկարահանումը և լուսանկարահանումն իրականացվում են միայն ծառայողական (ոչ անձնական) տեխնիկական միջոցներով: (...) Տեխնիկական միջոցով իրավախախտում հայտնաբերելու կամ ամրագրելու դեպքում ոստիկանության ծառայողն իրավունք չունի դադարեցնելու կամ ընդհատելու տեսանկարահանումը կամ տեսաձայնագրումը:

Տեսանյութերը կամ լուսանկարները *կարող են օգտագործվել* հանցագործությունների կամ հասարակական կարգի խախտումների դեպքերի քննության, ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ բողոքները քննելու, անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, հասարակական հնչեղություն ստացած դեպքերով ոստիկանության ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննության ավարտից հետո վերջինիս վերագրվող կարգապահական խախտման դեպքի կամ խախտման հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը հրապարակայնացնելու նպատակով՝ առանց այլ անձանց նույնականացնող տվյալների հրապարակման կամ դրանց նվազագույն հրապարակմամբ:

Եթե տեխնիկական միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տեսանյութերը կամ լուսանկարները ոստիկանությունում պահվում են մինչև

հանցագործության կամ հասարակական կարգի խախտման դեպքի քննության (այդ թվում՝ բողոքարկման վարույթի) կամ ծառայողական քննության ավարտը, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ: Անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու դեպքում տեսանյութերը կամ լուսանկարները պահվում են մինչև անձի խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնումը, բայց ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:

Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ դրանցով ամրագրված է ոստիկանության ծառայողների կողմից շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցների օգտագործման կարգը, և վերը շարադրված իրավադրույթներից որևէ մեկի բովանդակությունը չի հանգում նրան, որ ոստիկանության ծառայողների կողմից իրավախախտումների հայտնաբերումը կամ ամրագրումը՝ առանց շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցների օգտագործման, իրավաչափ չէ:

Սույն գործով վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած իրավախախտում կատարված լինելու փաստն ամրագրելու համար օրենսդրությամբ սահմանված չէ որևէ կանոն՝ բացառապես տեխնիկական միջոցի կիրառմամբ իրավախախտումն արձանագրելու առումով, ուստի, դրա բացակայությունը չի կարող հանգեցնել ակտի անվավերության, եթե իրավախախտում կատարված լինելու փաստը հաստատվում է գործում առկա այլ ապացույցների համակցությամբ:

Տվյալ դեպքում հայցվորի կողմից մեքենան ոչ սթափ վիճակում վարելու փաստը հաստատվում է գործում առկա փաստաթղթերով, մասնավորապես, որպես հայցվորի կողմից անթույլատրելի չափով ալկոհոլ օգտագործելու ապացույց՝ գործի նյութերում առկա են թիվ 91100852 ալկոտեստերով իրականացված ստուգման արդյունքները, և որպես նշված սարքի պատշաճ գործելու վերաբերյալ ապացույց՝ ստուգաչափման մասին թիվ 062517 վկայականը (գ.թ. 55), ըստ որի չափման տիրույթը՝ 0,000-1,200 մգ/լ է, ստուգաչափումը տեղի է ունեցել 07.01.2022 թվականին և ուժի մեջ է մինչև 07.01.2023 թվականը: Ալկոտեստերով հայցվորի սթափությունը պարզվել է 06.07.2022 թվականին:

Սույն գործի համար առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ հայցվոր Գոռ Մնացականյանը սթափության վիճակի զննություն անցել է իր իսկ համաձայնությամբ, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան ստուգաչափում անցած սարքի միջոցով: Հետևաբար, վերը հիշատակված ապացույցները բավարար են գալու այն համոզման, որ հայցվորի կողմից խախտվել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետը, այն է՝ տրանսպորտային միջոցը վարել է ոչ սթափ վիճակում, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա վերջինս ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ զրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը և մերժելով հայցը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն հատուկ կարծիքում շարադրված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

_____ ***Ք. ՄԿՈՅԱՆ***

_____ ***Լ. ՀԱԿՈԲՅԱՆ***